ՆԱԽԱԳԻԾ 20

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՈՐՈՇՈՒՄ

-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՍԿԻՉ ՍԱՐՔԵՐՈՒՄ (ԹՎԱՅԻՆ ՏԱԽՈԳՐԱՖՆԵՐՈՒՄ) ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՔԱՐՏԵՐԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 30-ի <<Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին>> Համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆ) ներդրման համար իրավասու մարմին ճանաչելու մասին>> N 1293-Ա որոշմամբ հաստատված 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևը՝ համաձայն հավելվածի 1-ի:

2) Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի տրամադրման կարգը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
,,-------,,----------- ի N ----Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈւԹՅՈւՆՈւՄ ՀՍԿԻՉ ՍԱՐՔԵՐՈւՄ (ԹՎԱՅԻՆ ՏԱԽՈԳՐԱՖՆԵՐՈւՄ) ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՔԱՐՏԵՐԻ ՁԵՎԸ

1. Հսկիչ սարքի (թվային տախոգրաֆի) քարտերը լինում են 4 տիպի.

1) վարորդի քարտ՝ (Ձև 1)

2) վերահսկողության քարտ՝ (Ձև 2)

3) կազմակերպության քարտ՝ (Ձև 3)

4) արհեստանոցի քարտ՝ (Ձև 4)

Ձև 1

### ՎԱՐՈՐԴԻ ՔԱՐՏ

### ԴԻՄԵՐԵՍ




### ԴԱՐՁԵՐԵՍ



# ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ

## ԴԻՄԵՐԵՍ




## ԴԱՐՁԵՐԵՍ



# ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ

## ԴԻՄԵՐԵՍ




## ԴԱՐՁԵՐԵՍ



# ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՔԱՐՏ

## ԴԻՄԵՐԵՍ




## ԴԱՐՁԵՐԵՍ



Հավելված 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
,,------,,--------------- ի N ----Ն որոշման

# ԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՍԿԻՉ ՍԱՐՔԵՐՈՒՄ (ԹՎԱՅԻՆ ՏԱԽՈԳՐԱՖՆԵՐՈՒՄ) ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆների) քարտերի (այսուհետ՝ քարտ(եր)) տրամադրումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը (այսուհետ՝ իրավասու մարմին):
2. Իրավասու մարմնի կողմից տրամադրվող քարտերը համաձայն հավելված 1-ի լինում են 4 տիպի՝
    1) վարորդի քարտ,
    2) վերահսկողության քարտ,
    3) կազմակերպության քարտ,
    4) արհեստանոցի քարտ:
3. Միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող վարորդները քարտ ստանալու նպատակով իրավասու մարմին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
    1) դիմում (համաձայն Ձև 5-ի),
    2) անձնագրի պատճենը,
    3) վարորդական վկայականի պատճենը,
    4) մեկ լուսանկար,
    5) պետական տուրքի անդորրագիրը:
4. Միջպետական բեռնափոխադրումների գործընթացը վերահսկելու նպատակով Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչությունը իրավասու մարմին է ներկայացնում դիմում՝ (համաձայն Ձև 6-ի):

5. Միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ կազմակերպություն) քարտ ստանալու նպատակով իրավասու մարմին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում՝ (համաձայն Ձև 7-ի),

2) իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճենը,

3) իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը,

4) պետական տուրքի անդորրագիրը:

6. Միջպետական բեռնափոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցներում տեղադրված հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆների) ստուգաչափում իրականացնող արհեստանոցները արհեստանոցի քարտ ստանալու համար իրավասու մարմին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ (համաձայն Ձև 8-ի),

2) իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճենը,

3) իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը,

4) հսկիչ սարքի (թվային տախոգրաֆի) ստուգաչափում իրականացնելու թույլտվության պատճենը,

5) արհեստանոցի տեխնիկի անձնագրի պատճենը,

6) արհեստանոցի տեխնիկի հավաստագրի պատճենը,

7) արհեստանոցի տեխնիկի մեկ լուսանկար,

8) պետական տուրքի անդորրագիրը:

7. Իրավասու մարմինը դիմումը ստանալու օրվան հաջորդող 25 օրացույցային օրվա ընթացքում՝

1) ստուգում է դիմումի և ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը,

2) անհրաժեշտության դեպքում փաստաթղթերի հավաստիության վերաբերյալ հարցում է կատարում համապատասխան մարմիններին,

3) քարտի պատրաստման համար ստացված դիմումները ուղարկում է քարտ պատրաստող կազմակերպությանը,

4) պատրաստի քարտը ստանալուց հետո այն տրամադրում է դիմումատուին:

8. Իրավասու մարմնի կողմից ներկայացված դիմումը կարող է մերժվել, եթե՝

1) այն ներկայացվել է սույն կարգի համապատասխանաբար 3-րդ կամ 4-րդ կամ 5-րդ կամ 6-րդ կետերով պահանջվող ոչ բոլոր փաստաթղթերը կամ ներկայացված փաստաթղթերը թերի են և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի համաձայն մատնանշված թերությունները չեն վերացվել,

2) դիմումատուն (բացառությամբ վերահսկողություն իրականացնող մարմնի) Հայաստանի Հանրապետությունում կամ այլ պետություններում արդեն իսկ ստացել է հսկիչ սարքի (թվային տախոգրաֆի) քարտ:

9. Դիմումի մերժման դեպքում իրավասու մարմինը 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է դիմումատուին, նշելով մերժման հիմքերը:

# ԴԻՄՈՒՄ

## վարորդի քարտ ստանալու համար

ՎՔ

**Բաժինը լրացվում է դիմումն ընդունող անձի կողմից.**

Անուն և ազգանուն՝

Դիմումն ընդունելու ամսաթիվը՝

(օր ամիս տարի)

Դիմումի համարը՝

Վարորդի լուսանկարի համար (սպիտակ ֆոնի վրա դիմամաս կամ կես պրոֆիլ)

45 մմ

35 մմ

***Լուսանկարը պետք է փակցվի դիմումն ընդունող անձի կողմից***

**Վարորդի ստորագրությունը** – որը պետք է տեղադրվի քարտի վրա (*ստորագրությունը պետք է իրականացվի սև թանաքով և չգերազանցի տրված շրջանակի չափսերը)*

## 1. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ազգանունը

Անունը

Ծննդյան ամսաթիվը

(օր ամիս տարի)

Ծննդյան վայրը

**Բնակության վայրի հասցեն**

Մարզը

Քաղաքը (գյուղը)

Փողոցի անվանումը

Շենքի (տան) համարը

Բնակարանի համարը

փոստային դասիչը

Պետությունը

Հեռախոսահամարը*

Բջջային հեռախոսահամարը*

Էլ. Փոստի հասցեն*

**Հասցե նամակները և քարտն ուղարկելու համար** *(լրացվում է միայն բնակության վայրի հասցեից տարբեր լինելու դեպքում)*

Ընկերություն *(լրացնել միայն եթե վարորդի քարտը և նամակները պետք է ուղարկվեն ընկերությանը)**

Մարզը

Քաղաքը (գյուղը)

Փողոցի անվանումը

Շենքի (տան) համարը

Բնակարանի համարը

փոստային դասիչը

Պետությունը

Հեռախոսահամարը*

Բջջային հեռախոսահամարը*

Էլ. Փոստի հասցեն*

## 2. ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ՏՄ թույլատրելի կարգը (երը)

Վկայականի համարը

Տրման ամսաթիվը
(օր – ամիս – տարի)

- -

Գործողության ժամկետը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐
(օր – ամիս – տարի)

☐ վավեր է ամբողջ կյանքի ընթացքում***

Ում կողմից է տրված

Տրամադրող պետությունը

## 3. *ԴԻՄՈՒՄ ԵՄ*

**1) ☐ քարտի առաջին տրամադրման համար**

**2) ☐ քարտի նորացման համար (քարտի համարը՝ ............................................ ), պատճառը՝**

**☐ դրա վավերականության ժամկետի ավարտի մոտ լինելը**

**☐ անձնական կամ վարչարարական տեղեկատվության փոփոխություն**

**3) ☐ քարտի փոփոխության համար (քարտի համարը............................................ ), պատճառը՝**

**☐ քարտի կորուստ**
**☐ գողացված քարտ**
**☐ քարտի վնասվածք կամ թերի գործողություն**

**4) ☐ քարտի փոփոխության համար բնակավայրի երկրի փոփոխության պատճառով ....................................................................................**

*(խնդրում ենք նշել նախորդ երկիրը)*

**5) քարտի տրամադրման համար վճարի վերադարձի դեպքում խնդրում եմ**

**☐ փոխանցել այն հետևյալ բանկային հաշվեհամարին.**

**☐ ուղարկել այն փոստային պատվերի միջոցով՝ Դիմորդի նամակագրական հասցեով****

*Եթե տարբերակներից ոչ մեկը նշված չէ կամ բանկային հաշվեհամարը չի տրամադրվել, վճարը պետք է վերադարձվի փոստային պատվերի միջոցով նամակագրական հասցեով:*

............................................ ....................................................................................

**Ամսաթիվ** **Դիմորդի ստորագրությունը**

ՁԵՎԸ ԼՐԱՑՆԵԼ ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ
* ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
** ՆՇԵԼ <<X>> ԸՍՏ ՊԱՀԱՆՋԻ

# ԴԻՄՈՒՄ

ՄՔ

## վերահսկողության քարտ ստանալու համար

**Բաժինը լրացվում է դիմումն ընդունող անձի կողմից.**
Անուն և ազգանուն՝

Դիմումն ընդունելու ամսաթիվը՝
(օր - ամիս - տարի)

Դիմումի համարը՝

1. **Թվային տախոգրաֆների վերահսկողություն իրականացնող մարմինը**

Անվանումը

**Քարտը և նամակները ուղարկելու համար վերահսկողություն իրականացնող մարմնի հասցեն**

Մարզը

Քաղաքը (գյուղը)

Փողոցի անվանումը

Շենքի (տան) համարը

Բնակարանի համարը

փոստային դասիչը

Պետությունը

Հեռախոսահամարը*

Բջջային հեռախոսահամարը*

Էլ. Փոստի հասցեն*

## 2. Թվային տախոգրաֆների վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարի տվյալները

Ազգանունը

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

Անունը

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

### 3. *ԴԻՄՈՒՄ ԵՄ***

1) ☐ քարտի առաջին տրամադրման համար

☐ առավելագույնը 5 տարի ժամկետով

☐ վավերականության ժամկետի ավարտով սահմանափակված ժամկետով (օր-ամիս-տարի) ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

2) ☐ քարտի նորացման համար (քարտի համարը՝ .............................................. )

☐ առավելագույնը 5 տարի ժամկետով

☐ վավերականության ժամկետի ավարտով սահմանափակված ժամկետով (օր-ամիս-տարի) ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐

պատճառը՝

☐ դրա վավերականության ժամկետի ավարտի մոտ լինելը

☐ անձնական կամ վարչարարական տեղեկատվության փոփոխություն

3) ☐ քարտի փոփոխության համար (քարտի համարը.............................................. ), պատճառը՝

☐ քարտի կորուստ

☐ գողացված քարտ

☐ քարտի վնասվածք կամ թերի գործողություն

4) քարտի տրամադրման համար վճարի վերադարձի դեպքում խնդրում եմ

☐ փոխանցել այն հետևյալ բանկային հաշվեհամարին.

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

*Եթե տարբերակներից ոչ մեկը նշված չէ կամ բանկային հաշվեհամարը չի տրամադրվել, վճարը պետք է վերադարձվի փոստային պատվերի միջոցով նամակագրական հասցեով:*

.............................................
Ամսաթիվ

.............................................................................
Դիմողի ստորագրությունը

ՁԵՎԸ ԼՐԱՑՆԵԼ ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ

* ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

** ՆՇԵԼ <<X>> ԸՍՏ ՊԱՀԱՆՋԻ

ԿՔ

# ԴԻՄՈՒՄ
# կազմակերպության քարտ ստանալու համար

**Բաժինը լրացվում է դիմումն ընդունող անձի կողմից.**
Անուն և ազգանուն՝

Դիմումն ընդունելու ամսաթիվը՝
(օր - ամիս - տարի)

Դիմումի համարը՝

## 1. ՏՎՅԱԼՆԵՐ

**Դիմորդի անունը** (համապատասխանաբար փոխադրում իրականացնող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը)

Պետ ռեգիստրի գրանցման համարը

Հարկատուի հարկային կոդը

**Քարտը և նամակներն ուղարկելու համար կազմակերպության գրանցման հասցեն**

Մարզը

Քաղաքը (գյուղը)

Փողոցի անվանումը

Շենքի (տան) համարը

Բնակարանի համարը

փոստային դասիչը

Պետությունը

Հեռախոսահամարը

Ֆաքսի համարը*

Էլ. Փոստի հասցեն*

| |
|---|
| |

2. **Դիմումը ներկայացնող իրավասու անձի կամ նրա լիազորված անձի ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Ազգանունը

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Անունը

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

3. *ԴԻՄՈՒՄ ԵՄ***

1) ☐ **քարտի առաջին տրամադրման համար**

2) ☐ **քարտի նորացման համար (քարտի համարը՝ ........................................... ), պատճառը՝**

☐ **դրա վավերականության ժամկետի ավարտի մոտ լինելը**

☐ **անձնական կամ վարչարարական տեղեկատվության փոփոխություն**

3) ☐ **քարտի փոփոխության համար (քարտի համարը........................................... ), պատճառը՝**

☐ **քարտի կորուստ**

☐ **գողացված քարտ**

☐ **քարտի վնասվածք կամ թերի գործողություն**

4) **քարտի փոփոխության համար նստավայրի երկրի փոփոխության պատճառով.......................................................................................................**

*(խնդրում ենք նշել նախկին երկիրը)*

5) **քարտի տրամադրման համար վճարի վերադարձի դեպքում խնդրում եմ**

☐ **փոխանցել այն հետևյալ բանկային հաշվեհամարին.**

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

☐ **ուղարկել այն փոստային պատվերի միջոցով Դիմորդի նամակագրական հասցեով ****

*Եթե տարբերակներից ոչ մեկը նշված չէ կամ բանկային հաշվեհամարը չի տրամադրվել, վճարը պետք է վերադարձվի փոստային պատվերի միջոցով նամակագրական հասցեով:*

............................................ ..........................................................................

**Ամսաթիվ** **Դիմորդի ստորագրությունը**

ՁԵՎԸ ԼՐԱՑՆԵԼ ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ
* ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
** ՆՇԵԼ <<X>> ԸՍՏ ՊԱՀԱՆՋԻ

# ԴԻՄՈՒՄ

## արհեստանոցի քարտ ստանալու համար

ԱՔ

Բաժինը լրացվում է դիմումն ընդունող անձի կողմից.

Անուն և ազգանուն՝

Դիմումն ընդունելու ամսաթիվը՝
(օր ամիս տարի)

Դիմումի համարը՝

Արհեստանոցի տեխնիկի լուսանկարի համար (սպիտակ ֆոնի վրա, դիմամաս կամ կես պրոֆիլ)

45մմ

35 մմ

*Լուսանկարը պետք է փակցվի դիմումն ընդունող անձի կողմ*

**Տեխնիկի ստորագրությունը –** որը պետք է տեղադրվի քարտի վրա (ստորագրությունը պետք է իրականացվի սև թանաքով և չգերազանցի տրված շրջանակի չափսերը)

### 1. ՏԵԽՆԻԿԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ազգանունը

Անունը

**Արհեստանոցի քարտի ծածկագիրը (PIN կոդ) և հասցեն նամակներն ուղարկելու համար (տեխնիկի համար)**

Մարզը

Քաղաքը (գյուղը)

Փողոցի անվանումը

Շենքի (տան) համարը

Բնակարանի համարը

փոստային դասիչը

Պետությունը

Հեռախոսահամարը*

Բջջային հեռախոսահամարը*

Էլ. Փոստի հասցեն*

**2. Թվային տախոգրաֆների ստուգումներ իրականացնելու համար տեխնիկի ՀԱՎԱՍՏԱԳԻՐ**

Հավաստագրի համարը

Տրամադրման ամսաթիվը
(օր – ամիս – տարի)  __ __ - __ __ - __ __ __ __

**3. ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ տվյալները**

Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը

Պետ ռեգիստրի գրանցման համարը

Հարկատուի հարկային կոդը

**Արհեստանոցի աշխատանքային հասցեն քարտը և նամակներն ուղարկելու համար**

Մարզը

Քաղաքը (գյուղը)

Փողոցի անվանումը

Շենքի (տան) համարը

Բնակարանի համարը

փոստային դասիչը

Պետությունը

Հեռախոսահամարը*

Բջջային հեռախոսահամարը*

Էլ. Փոստի հասցեն*

## 4. ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Թույլտվության համարը ☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐

Տրամադրման ամսաթիվը ☐☐ - ☐☐ - ☐☐☐☐
(օր – ամիս – տարի)

## 5. Դիմումը ներկայացնող իրավասու անձի կամ նրա կողմից լիազորված անձի ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ազգանունը

☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐

Անունը

☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐

## 6. *ԴԻՄՈՒՄ ԵՄ****

1) ☐ **քարտի առաջին տրամադրման համար**

2) ☐ **քարտի նորացման համար (քարտի համարը՝ .................................................. ), պատճառը՝**

☐ դրա վավերականության ժամկետի ավարտի մոտ լինելը

☐ անձնական կամ վարչարարական տեղեկատվության փոփոխություն

3) ☐ **քարտի փոփոխության համար (քարտի համարը.................................................. ), պատճառը՝**

☐ **քարտի կորուստ**

☐ **գողացված քարտ**

☐ **քարտի վնասվածք կամ թերի գործողություն**

☐ **PIN-ի կորստի կամ հինգ անգամ սխալ PIN մուտքագրելու արդյունքում քարտի անվավերություն**

4) **քարտի տրամադրման համար վճարի վերադարձի դեպքում խնդրում եմ**

☐ **փոխանցել այն հետևյալ բանկային հաշվեհամարին.** ☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐☐

☐ **ուղարկել այն փոստային պատվերի միջոցով Դիմողի նամակագրական հասցեով** **

*Եթե տարբերակներից ոչ մեկը նշված չէ կամ բանկային հաշվեհամարը չի տրամադրվել, վճարը պետք է վերադարձվի փոստային պատվերի միջոցով նամակագրական հասցեով:*

..............................................
**Ամսաթիվ**

................................................................................
**Դիմողի ստորագրությունը**

ՁԵՎԸ ԼՐԱՑՆԵԼ ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ
* ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
** ՆՇԵԼ <<X>> ԸՍՏ ԳԱՀԱՆՋԻ

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ**

***1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.*** Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

***2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.*** 2006 թվականից Հայաստանի Հանրապետությունը միացել է <<Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին>> Եվրոմիության Համաձայնագրին, որով նախատեսված է հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆների) կիրառումը բեռնատար տրանսպորտային միջոցներում: Որոշման նախագծով սահմանվում է WE 1360/2002 Եվրոմիության դիրեկտիվայի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևը և դրանց տրամադրման կարգը:

***3. Այլ տեղեկություններ.*** Այլ տեղեկություններ չկան:

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին>> որոշման նախագիծը ընդունելու դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին**

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում եկամուտների ոչ էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին>> նախագծի նախագծմանը և քննարկմանը հասարակության մասնակցության մասին**

***1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը.*** Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին>> որոշման նախագիծը տեղակայվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ինտերնետային կայքում (www.mtc.am):

***2. Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին.*** Նախագծի վերաբերյալ հասարակական քննարկումներ իրականացվել են մինչև Հայաստանի Հանրապետության կառավարություն կողմից 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N 1293-Ա որոշման ընդունումը:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ <<Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին>> ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

***1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).***

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին>> որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 30-ի <<Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին>> համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆ) ներդրման համար իրավասու մարմին ճանաչելու մասին>> N 1293-Ա որոշմամբ սահմանված պահանջների կատարմամբ:

***2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.***

Ներկայումս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից մշակված Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին>> որոշման նախագծով սահմանվում է, որ WE 1360/2002 Եվրոմիության դիրեկտիվայի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆների) քարտերի և դրանց ընդունման համար հայտերի ձևերի մշակում և դրանք եվրոպական կառույցներում հաստատման ապահովում:

***3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը.***

<<Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին>> համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից մշակվում են մի շարք իրավական ակտերի նախագծեր, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի

***4. Կարգավորման նպատակը և բնույթը.***

Որոշման նախագծի ընդունումը նպատակ է հետապնդում միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող վարորդներին, վերահսկողություն իրականացնող մարմնին, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին ինչպես նաև արհեստանոցի տեխնիկներին տրանսպորտի ոլորտի պետական իրավասու մարմնի կողմից ներկայացնել հսկիչ սարքերում (թվային տախոգրաֆներում) օգտագործվող քարտերի տրման կարգը, հայտերի օրինակելի ձևը, ինչպես նաև պահանջվող փաստաթղթերի ցանկը:

***5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք***

Որոշման նախագիծը մշակել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչությունը:

***6. Ակնկալվող արդյունքը.***

Որոշման նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետության տարածքից իրականացվող միջպետական բեռնափոխադրումների անվտանգության բարձրացում և միջազգային չափանիշներին համապատասխանեցում:

*Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ*

AM

Վարորդի քարտ
DRIVER CARD
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA

Վարորդի քարտ
Driver Card

1. ազգանունը/Surname
2. անունը (ներ)/First name(s)
3. ծննդյան ամսաթիվը/Birth date
4a. տրման ամսաթիվը/Date of start of validity of card
4b. վավերական է մինչև/Administrative expiry date of card
4c. ում կողմից է տրված/Issuing authority
5a. վարորդական վկայականի համարը/Driving license number
5b. քարտի համարը/Card number
6. վարորդի լուսանկարը/Photograph
7. ստորագրություն/Signature

*Խնդրվում է վերադարձնել/Please return to:*
Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն
Երևան, Նալբանդյան 28
**Ministry of Transport and Communication of the Republic of Armenia**
**28 Nalbandyan, Yerevan**

AM

Կազմակերպության քարտ
COMPANY CARD
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA

Կազմակերպության քարտ
Company Card

1. կազմակերպության անվանումը/Company Name
4a. տրման ամսաթիվը/Date of start of validity of card
4b. վավերական է մինչև/Administrative expiry date of card
4c. ում կողմից է տրված/Issuing authority
5b. քարտի համարը/Card number
8. կազմակերպության հասցեն/Address

*Խնդրվում է վերադարձնել/Please return to*
Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն
Երևան, Նալբանդյան 28
**Ministry of Transport and Communication of the Republic of Armenia**
**28 Nalbandyan, Yerevan**

AM

Վերահսկողության քարտ
CONTROL CARD
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA

Վերահսկողության քարտ
Control Card

1. թվային տախոգրաֆը ստուգող լիազոր մարմին/Control Body
4a. տրման ամսաթիվը/Date of start of validity of card
4b. վավերական է մինչև/Administrative expiry date of card
4c. ում կողմից է տրված/Issuing authority
5b. քարտի համարը/Card number
8. թվային տախոգրաֆը ստուգող լիազոր մարմնի հասցեն/Address

*Խնդրվում է վերադարձնել/Please return to:*
Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն
Երևան, Նալբանդյան 28
**Ministry of Transport and Communication of the Republic of Armenia**
**28 Nalbandyan, Yerevan**

AM

Արհեստանոցի քարտ
WORKSHOP CARD
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA

Արհեստանոցի քարտ
Workshop Card

1. արհեստանոցի անվանումը/Workshop Name
2. ազգանունը/Surname
3. անունը (ներ)/First name(s)
4a. տրման ամսաթիվը/Date of start of validity of card
4b. վավերական է մինչև/Administrative expiry date of card
4c. ում կողմից է տրված/Issuing authority
5b. քարտի համարը/Card number
6. արհեստանոցի տեխնիկի լուսանկարը/Photograph
7. արհեստանոցի տեխնիկի ստորագրությունը/Signature
8. արհեստանոցի հասցեն/Address

*Խնդրվում է վերադարձնել/Please return to:*
Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն
Երևան, Նալբանդյան 28
**Ministry of Transport and Communication of the Republic of Armenia**
**28 Nalbandyan, Yerevan**

AM